ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 10 հունվարի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Մ. Թոփուզյանի
Հ. Նազարյանի

Քննության առնելով քաղաքացի Աշոտ Մանուկյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Աշոտ Մանուկյանը 2010թ. դեկտեմբերի 15-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426^3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը եւ 426^4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներին եւ 101-րդ հոդվածի 6-րդ կետին հակասող եւ անվավեր:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. Դիմողի կարծիքով՝ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա, որով բացահայտվել է սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը եւ որը տարբերվում է իրավակիրառողի կողմից դրան տրված մեկնաբանությունից, դատական ակտերի վերանայման բացակայության առկա իրավակարգավորման պայմաններում չի ապահովվում սահմանադրական դատարանի որոշումներում արտա-

հայտված իրավական դիրքորոշումների լիարժեք կատարումը՝ անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրացումը դարձնելով ինքնանպատակ եւ ոչ արդյունավետ:

2. Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ, 28-րդ հոդվածների եւ 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ մասերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Աշոտ Մանուկյանի անհատական դիմումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426^3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի եւ 426^4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ, ընդունել քննության, կազմել գործ:

2. Գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Բավարարել պետական փուրքից ազատելու վերաբերյալ դիմողի միջնորդությունը:

4. Նկատի ունենալով, որ ՀՀ սահմանադրական դատարանի վարույթում է գտնվում «Քաղաքացի Ս. Ասատրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը՝ քննության ընդունված ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմի 22 հուլիսի 2010թ. ՍԴԴԿՈ/1-20 որոշմամբ, առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով՝ առաջարկել միավորել սույն գործն ու նշված գործը եւ քննել դրանք դատարանի նույն նիստում:

Նախագահող՝

Անդամներ՝

10 հունվարի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/2-41